

**ՀԱՅԵՐԵՆԻ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ՝
«ՀԱԳՈՒՍՏ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՆՀԱՅՏ ԾԱԳՄԱՆ ԲԱՌԵՐԻ
ԴԻՏԱՐԿՈՒՄ**

ՀՏԴ 81'373

DOI: 1 10.56246/18294480-2024.17-34

ՂԱՄՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

*բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող
Էլփոստ՝ lgamoyan@mail.ru*

«Հագուստ» իմաստային դաշտում կան բազմաթիվ անհայտ ծագման բառեր, որոնք նախ առանձնացվել են երկու խմբով՝ ա) բառեր, որոնց ծագման վերաբերյալ ընդհանրապես ոչ մի տեղեկություն չունենք և բ) բառեր, որոնց ծագման վերաբերյալ միայն գիտենք, որ փոխառություն են, սակայն բուն աղբյուրները հավաստված չեն: Ապա դրանք խմբավորել ենք ըստ տարածվածության և գործածականության հաճախականության:

Ուսումնասիրելով «հագուստ» իմաստային դաշտի անհայտ ծագման բառերը՝ նկատել ենք, որ դրանց գործածականության և տարածվածության աստիճանը նույնը չէ. շատ գործածական բառերի կողքին կարող են լինել հազվադեպ գործածվող բառեր:

Կան անստույգ բառեր, որոնց ծագման վերաբերյալ լեզվաբանները փորձում են որոշ ենթադրություններ անել:

Ըստ բացատրական բառարանների տվյալների՝ ստուգաբանական բառարաններում արձանագրված անստույգ ծագման բառերից մոտավոր հաշվարկներով գրաբարի բառարանում առկա են 2 տասնյակից ավելին, միջին հայերենի բառարանում արձանագրված է շուրջ 10 բառ, արդի արևելահայերենի բառարաններում՝ մոտ 25, արևմտահայերենում՝ մոտ 17, բարբառներում՝ շուրջ 12, իսկ մոտ 17 բառ ոչ մի բառարանում արձանագրված չէ (բացառությամբ մի քանիսի առկայությունը Ստ. Մալխասյանցի բառարանում):

Անհայտ ծագման բառերը կայուն թիվ չեն կազմում. այն կարող է փոփոխվել կատարվող նոր ստուգաբանությունների հետևանքով:

Բանալի բառեր՝ հագուստ, իմաստային դաշտ, անստույգ բառեր, արևելահայերեն, արևմտահայերեն, բարբառ, միջին հայերեն, գրաբար, փոխառություն, ստուգաբանություն:

Նախաբան

«Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ Գ. Զահուկյանը բառիմաստների քննությունը կատարել է՝ առանձնացնելով 23 բառիմաստային խմբեր, որոնցից մեկն էլ «Հագուստ, անձնական զարդարանք և խնամք» իմաստային (թեմատիկ) խումբն է: Նշված ոլորտին պատկանող բազմաթիվ բառեր կան ոչ միայն այս, այլև մյուս խմբերում: Բավականին շատ են հանդիպում «հագուստ» ընդհանուր նշանակությամբ անհայտ ծագման (չստուգաբանված) բառեր:

«Հագուստ» իմաստային դաշտի բոլոր այն բառերը, որոնք բնիկ հայերեն չեն կամ էլ չեն կապվում որևէ այլ լեզվի հետ և փոխառություններ չեն, այսինքն՝ գիտականորեն չի հաստատվում դրանց ծագումը, բնիկ կամ որևէ լեզվից փոխառյալ լինելը՝ համարվում են անստույգ կամ չստուգաբանված բառեր, այլ կերպ՝ ստացվածքային կամ ժառանգորդական բառեր:

Հետևելով Գ. Զահուկյանի այն տեղեկությանը, որ «խիստ մեծաթիվ են հայերենի չստուգաբանված՝ անհայտ ծագման բառարմատները, որոնք մոտավոր հաշվումներով կազմում են բառարմատների ընդհանուր թվի առնվազն կեսը, եթե ոչ կեսից ավելին»¹ մենք ևս վստահ կարող ենք ասել, որ «հագուստ» իմաստային դաշտի անհայտ ծագման բառարմատներն ավելի մեծ թիվ են կազմում, քան բնիկ հնդեվրոպական բառերը²:

Այդ բառերի անհայտ ծագման կամ ոչ ճիշտ ստուգաբանության վերաբերյալ բավական տեղեկություններ են տալիս Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ը (այսուհետ՝ ՀԱԲ), Գ. Զահուկյանի «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատությունը և «Հայերեն ստուգաբանական բառարան»-ը (այսուհետ՝ ՍՊԲ):

Վերոհիշյալ աշխատություններից օգտվելով՝ ստորև ներկայացնում ենք «հագուստ» իմաստային դաշտում առանձնացված այնպիսի բառեր (մեր տվյալներով՝ շուրջ 60), որոնց ծագումն ու կառուցվածքը վերջնական ստուգաբանությամբ հաստատված չեն: Այսպես.

ա) *բառեր*, որոնց ծագման վերաբերյալ ոչ մի տեղեկություն չունենք, ինչպես՝ **կուսթ** «վուշ, կտավ», **պակոպիս** «ասեղ», **չանչաղ** «քուրջ» և այլն,

բ) *բառեր*, որոնց ծագման վերաբերյալ միայն գիտենք, որ փոխառություն են, սակայն բուն աղբյուրները հավաստված չեն, ինչպես՝ **մըխս** «կոշիկ», **ֆոուր** «հանդերձի մաս, փեշ, քղանցք», **թալիսայ** «բարակ թել», **կշան** «խույր», **գահակ** «օղակ, լամբակ» և այլն:

¹ Գ. Զահուկյան, Հայերենի անհայտ ծագման բառարմատները, Պատմա-բանասիրական հանդես, 2 (129), Ե., 1990, էջ 62:

² Տե՛ս Լ. Ղաճոյան, Բնիկ հայերեն բառեր «հագուստ» իմաստային դաշտում, Պատմաբանասիրական հանդես, հ. 2, Ե., 2022, էջ 188-200:

Հագուստ (նաև գործվածք) կամ *հագուստի մաս* հասկացություն նշող անստույգ ծագման բառերից են նաև՝ **բաակ** «բրդյա գործվածք, սարոյ» «կանացի երկար զգեստ», **սիմեի** «մետաքս» (ՀՄԲ), «կանանց գլուխը կապելու մետաքսե թաշկինակ» (ՀՄԲ), **մոն** «քղանցք (°)», **երախ**¹ «քահանայապետի հանդերձի երկար սպիտակ շապիկ», **կաճուկ** «խանձարուր, բարուր» («սոնապան») և այլն:

Գ. Զահուկյանն իր ՀՄԲ-ում երբեմն փորձում է անստույգ բառերի ծագման վերաբերյալ որոշ ենթադրություններ անել, ինչպես՝

Ազդեր (ազդիր) «թեզանի»: Այս բառի վերաբերյալ նշում է. «հազիվ թե կապ ունենա *ազրն* բառի հետ և ծագի հնդեվրոպական միևնույն *pag՝ «ամրացնել արմատից՝ այլ աճականով»»:

Եչ «հագուստի երես»: Բառարանային բառ համարելով՝ Գ. Զահուկյանը ենթադրում է բառի հնարավոր նույնություն էջ բառի հետ, որ ունի նաև «գրքի երես» իմաստը:

Ըստիմանիկ «կոշիկ հագնել»: Ըստ Զահուկյանի՝ այս բառը կազմված է *ըստ*-նախածանցից և այլուստ անծանոթ **իմանիկ* բայից, որը հազիվ թե կապ ունենա հնդեվրոպական *em- «վերցնել» արմատի հետ:

Խացփցի «հաստ կտորից հագուստ»: «Արդյոք պատկերավոր բարբառային կազմություն չէ՞, որի առաջին մասում հաստ>խաստ բառն է» (ՀՄԲ):

Կաճուկ «խանձարուր, բարուր» («սոնապան»): Գ. Զահուկյանը կարծում է, որ այս բառը *կաճ* «թաղիք» արմատից է:

Թեզան «գործվածքի լայնքի թել, հագուստի երկար թև»: Ըստ Զահուկյանի՝ այս արմատը հազիվ թե կապ ունենա հնդեվրոպական *stegh- «ծակել» արմատի հետ որպես կողմնակի *-gʰ-ով տարբերակից ծագած ձև:

Թեղք «թել, թելաշար»: Զահուկյանը փորձում է այս արմատը կապել *թել* բառի հետ: Ըստ Աճառյանի՝ «վերջնաձայն **ք** արմատական է և ոչ թե յոզնակիի նշան, ինչպես ցոյց է տալիս յարադիր մի»:

Կապերտ (բրբ. կարպետ) «շորի կտոր, լաթ, ցնցոտի, քուրձ, կապերտ»: Գ. Զահուկյանը կասկածում է, որ այս բառը որևէ առնչություն ունի *կապ* բառի հետ: Կարծում է, թե հնարավոր է մ. լատ. carpitā-ի (>անգլ. carpet «գորգ») աղբյուրը հայ. բրբ. մի ձև է, բայց քիչ հավանական է կապը «գորգ» նշանակող սլավոնական բառերի հետ (հմմտ. ռուս. ковер):

Գրատ (գրատ, դրատ, դրատ, դրատ) «պատմունճան, վերարկու» (նաև «քղանցք»): Այստեղ Գ. Զահուկյանը մի փոքր երկմտում է բառի ծագումը բխեցնել հնդեվրոպական *uer- «փակել, ծածկել. պաշտպանել» (հմմտ. լիտվ. verti «թելել», լատվ. vert «թելել, կարել») կամ *uer- («պտտել, ծոել») արմատներից որևէ մեկից:

Մովկ «լայն վարտիք» (°): Ծագումն անհայտ է, եթե, իհարկե, այն մոյկ-ի սխալագրությունը չէ: Հ. Աճառյանը համարում է «նորագիտ բառ, որը մեկ անգամ

¹ *Երախ* բառն ունի համանուն՝ երախ¹ (բրբ. *ռեխ*) «բերան» իմաստով:

հանդիպում է Ոսկ. պող. Ա. 463-ում՝ «Զքղամիթ և զկամար և զմովկա»»։ Ըստ Աճառյանի՝ եթե չլիներ հույն բնագրում դրված «լայն վարտիք» իմաստով, ապա այն մոյկ «կօշիկ» բառի «սխալ գրչութիւն»-ը կհամարեր (<ԱԲ, 3):

Հայտնի է՝ «հագուստ» իմաստային դաշտի անստույգ բառերի մեծ մասը մեզ է հասել գրաբարյան բնագրերի միջոցով։ Դրանցից շատերը, ինչպես նկատում է Հ. Աճառյանը, ընդամենը մեկ անգամ են վկայված։ Օրինակ.

Մոր¹ (մոռ (") «մի տեսակ զգեստ»։ Հ. Աճառյանը Կաղանկատվեցուց բերում է մեկ օրինակ՝ «Ետուն նմա ևս զանգապանս մարգարտով և գումարտակ նոյնգունակ շուրջ զպարանոցան. ագուցին նմա արջանթոյր մորս չորիք. դրօշակօք» (Կղնկտ., Բ, 18) (<ԱԲ, 3):

Խանփուկ «հագուստի քղանցքից կախվող պատկանելիք» (մեկ անգամ վկայված)։ «...Աստուած՝ իբրև մանկտոյ՝ հրամայեաց շուրջ զստորոտովն խանփուկն կախել, զի յայն հայեցեալ՝ յիշեցեն, թէ զքառասուն ամ յանապատին ոչ մաշեցան հանդերձք մեր, այլ և աճեցին ըստ հասակին. և կոչէին զայն՝ քղանցք»։

Ըստ ՀԱԲ-ի մեկ անգամ գործածված բառերից են նաև՝ **ոնք** «սքեմ», **խոզոխ** «ուսի վրայ ձգուած զգեստ», ավելի ճիշտ՝ «ուրար», նաև վերոհշյալ՝ **բաւակ, ազդեր, խանփուկ, երախ, ըստիմանիկ, խացիցի, կաճուկ** և այլն։ Այս բառերն արձանագրված են նաև Ստ. Մալխասյանցի ՀԲԲ-ում՝ որպես հազվադեպ գործածական բառեր։

«Հագուստ» իմաստային դաշտում կան բառեր, որոնք թեև ըստ ՀԱԲ-ի և ՀԱԲ-ի անստույգ ծագման են, բայց որոշ լեզվաբաններ այլ բան են արձանագրում։ Օրինակ.

Թալխայ. Ռ. Ղազարյանը նշում է՝ փոխառություն արաբերենից (ՄՀԲ) և բերում է հետևյալ օրինակը՝ «Պարտին զանծինս մաշել ըստ օրինակի թալխայի, որպէս զի ի ծակ ասղանն անցանէ» (Երզն. մտթ. ժթ. 24, ՀԱԲ)։

Քցափ. Ռ. Ղազարյանը ենթադրում է. «թերևս ծագում է թուրքերեն kispet, kisve «ծածկոց, ծածկույթ. հագուստ» բառերից»։

Քեհեգ. ըստ ՀԱԲ-ի՝ բուն աղբյուրը հավաստված չէ, և չգիտենք՝ այն փոխառություն է սեմական սկզբնաղբյուրի՞ց՝ որևէ լեզվի (հրանակա՞ն) միջնորդությամբ։ Իսկ Ստ. Մալխասյանցն այն համարում է փոխառություն հունարեն. by'ssos, ասորերեն būsā բառերից (<ԲԲ)։

Ուսումնասիրելով «հագուստ» իմաստային դաշտի անհայտ ծագման բառերը՝ նկատել ենք, որ դրանց գործածականության և տարածվածության աստիճանը նույնը չէ. շատ գործածական բառերի կողքին կարող են լինել հազվադեպ գործածվող բառեր, ինչպես՝

1. միայն արդի գրական հայերենի երկու տարբերակներում գործածվում են՝ **խանթուռ** «ծոպ» (ԺՀԲԲ-ում արձանագրված է՝ **խանթուռք**), **քցափ** «կրոնավորական գլխարկ», **թեզան** «գործվածքի լայնքի թել, հագուստի երկար թև», որից ունենք

¹ Մոր բառն ունի համանուններ. մոր¹ «մորենու պտուղ, «մորի»»-մոր² «մի թունավոր միջատ՝ փաղեժ» և վերոնշյալ մոր³-ը։

հետևյալ կազմությունները՝ *թեզ(ա)նիք*, *թեզանադ*, *թեզանավոր*, *ոսկերթեզան*, *թեզներբերան* «թեզանիքի՝ թևերի բերանը կամ ծայրերը» և այլն: Պետք է նկատել, որ այս բառից ունենք **թեզնիք** բաղադրությունը, որը հանդիպում ենք նաև միջին հայերենի և բարբառային բառարաններում:

Տաբադ «անդրավարտիք, կտավեղեն» (ԲՀ՝ «միջօր չափ և բարձիւք»): Այս բառի մասին Ստ. Մալխասյանը նշում է. «1. անորոշ տեսակի ագանելիք մէջքից վար, գուցէ կտաւեայ» և «2. ներկայումս արևմտ. գրական լեզւում գործ է ածվում եւրոպական տարագով շալվարի նշ.», որից ունենք՝ *դաբադաձիգ/դաբադափոկ* «փոկ՝ երիգ, որ ուսի վրայով ձգվելով և առջևի ու յետևի կողմից ծայրերով տաբատի վրայ կոճկելով պահում է տաբատը և չի թողնում կախ ընկնել. ձգափոկ»:

Տառափոկ (*դառովդակ*, *դառովակ*, *դառովակ*, *դառովկակ*) «զինվորական վերարկու», ԺՀԼԲԲ-ում այս իմաստն արդեն հնացած է, բայց ունի նոր իմաստներ՝ «վերարկու՝ մասնավորապէս թաղիքե, այծենական» և «թաղիքից պատրաստված անթև մեկնոց հովիվների համար»:

Շաղամաթ «թել, դերձան»: Ենթադրվում է շաղ «կապ, կցում» բառից է: Այս բառը գործածվում է արևմտահայերենում նույն՝ «հաստ թել, քուղ, առասան» իմաստներով (ԱԱՆԲ): Արևելահայերենում թեև կա, բայց արդեն հնացած է համարվում (ԺՀԼԲԲ):

Փեղոյր «կանացի գլխարկ»: ԺՀԼԲԲ-ում հանդիպում ենք «(հնց.) տղամարդու կամ կնոջ գլխարկ» իմաստով: Այս արմատից ունենք հետևյալ բաղադրությունները՝ *փեղուրագործ(-ություն)*, *փեղուրավաճառ*, *փեղուրարար* «փեղուրագործ» և այլն:

Քոթանակ «հագուստ»: Արևմտահայերենում հանդիպում ենք «1. քաթանե ծածկոց՝ հագուստ, 2. ներքնաշոր», ԺՀԼԲԲ-ում՝ «(հնց.) մարմնի ծածկույթ, հագուստ» իմաստներով:

2. Միայն արևմտահայերենում գործածվող անստույգ ծագման բառ է՝

Խարազն «քուրձ, մազազգեստ», սակայն «*հողաթափ՝ չուսի կարող*» իմաստով:

3. Միայն արևելահայերենում գործածվող անստույգ ծագման բառերից են.

Շղարշ «նուրբ կտոր, տյուլ», որից ունենք՝ *շղարշադեռ* «շղարշեայ քող»: Ստ. Մալխասյանցն արձանագրում է՝ անգործածական «1. գլխի ծածկոց, դաստառակ», ապա՝ գործածական՝ «2. մետաքսից բարակ գործուածք, որ կանայք ձգում են գլխներին կմ երեսներին իբրև քօղ. չիքիլայ» իմաստներով:

Գրադ (գրատ, դրատ, դրատ, դրատ) «պատմութան, վերարկու» (նաև «քղա՞նցք»): ԺՀԼԲԲ-ում այն կա՝ «զինվորական վերարկու» իմաստով, բայց հնց. նշումով:

Այդպես նաև՝ **վուշ** (որից՝ վշագործ), **փարեյի** «ջնջոց, քուրջ, լաթ», **գահակ**, բայց բոլորովին այլ՝ «փոքրիկ աթոռ՝ նստարան» իմաստով և այլ բառեր:

4. Միայն բարբառներում հանդիպող անհայտ ծագման բառերից են՝ **մըխս** «կոշիկ», **թախայ** «բարակ թել» (Ղարաբաղի (Գնձ.) բարբառում՝ «սպիտակեղեն կարելու բարակ թել» (ՀԼԲԲ)), **եչ** «հագուստի երես», որը բարբառներում գործածվում է նույն և «աստառ» իմաստով:

5. Միայն արևելահայերենում և բարբառներում գործածվող անհայտ ծագման բառերից են՝ **քոթել** «կարկատել, կցնցելով կարել», **քուղ** «ուլորած դերձան, կար, քուղ», **քուրջ** «ցնցոտի, հին շորեր» և այլն: Հետաքրքիրն այն է, որ ըստ Աճառյանի՝ Ռումանահայքի և Սուչավայի բարբառներում **քուրջ** նշանակում է «զգեստ աշխարհականի» (որովհետև **զգեստ** յատկացրած է կրօնաւորի հագուստին): Ստ. Մալխասյանցն արձանագրում է **քուրջ/քուրծ/քուրջ**՝ «1. հին ու մին կտոր, ցնցոտի, 2. աշխարհականի շոր. (զգեստ բառը յատկացրած լինելով հոգևորականներին. հմմտ. զգեստաւորվել), 3. անպէտք՝ փչացած իրեր փայտից, մետաղից ևն»:

6. Միայն բարբառներում և միջին հայերենում գործածվող անհայտ ծագման բառերից գտել ենք **խարթ** արմատը՝ «փիլոն» իմաստով, բարբառներում (օրինակ՝ Խոտուրջուրում) հանդիպում ենք նաև **խարթի** տարբերակը՝ «երկար վերարկու» իմաստով:

7. Միայն միջին հայերենում և արևելահայերենում հանդիպում ենք **բեհեզ** «նուրբ (սկզբնապես կտավե) գործվածք» արմատը, որից ունենք հետևյալ բաղադրությունները՝ **բեհեզեայ**, **բեհեզեղէն**, **բեհեզազգեստ**//**բեհեզազգեստ**, **բեհեզա-տիպ**, ինչպես նաև՝ միջին հայերենում՝ **բեհեզագոյն**, արդի արևելահայերենում այն ունի հետևյալ իմաստները՝ «1. վուշի նուրբ, լավորակ թել, 2. այդ թելից գործված կերպաս՝ կտոր, 3. բեհեզյա զգեստ», որից ունենք՝ **բեհեզագործ**, **բեհեզանման**, **բեհեզե**, **բեհեզեղէն**, **բեհեզյա**: Ըստ Ստ. Մալխասյանցի՝ արդեն անգործածական են «1. վուշի բարակ թել, 2. վուշի թելից գործված նուրբ կտոր» իմաստները, գործածական է՝ «ազնիվ զգեստ վուշի կտորից» իմաստը և բերում է հետևյալ օրինակը՝ «Հագնում է բեհեզ և ծիրանի», նշելով՝ «այժմեան բեազը (տաճկ.) բամբակի թելից հասարակ գործուածք է», և նշում է հետևյալ բաղադրությունները՝ **բեհեզագործ**, **բեհեզազանգուած**, **բեհեզազգեստ**//**բեհեզազգեստ**, **բեհեզավաճառ**, **բեհեզեայ**, **բեհեզեղէն**, **բեհեզատիպ** և այլն:

8. Միայն միջին հայերենում և արևմտահայերենում հանդիպում ենք՝ **ծֆուլ** «հոգևորականի գլխարկ», **հաճաղ** «լվացված մետաքս» անհայտ ծագման բառերը:

9. Կան անհայտ ծագման մի քանի բառեր, որոնց կարելի է հանդիպել հայերենի զարգացման բոլոր փուլերում, ինչպես.

Նարաւոր (նարօտ) «գույնզգույն թել»: Գրաբարում գործածվել է նաև երկրորդ իմաստով՝ «գոյնզգոյն թելերով գործուած կամ գոյնզգոյն ներկուած կտոր» (ԳԲ): Գրաբարում հանդիպում ենք հետևյալ բաղադրությունները՝ **նարօտաներկ** «գործուած-քեղէն՝ թել ևն ներկող վարպետ, ներկարար», որից էլ՝ **նարօտաներկութիւն**:

Նարոյր բառն այսօր էլ գործածվում է և՛ բարբառներում, և՛ արդի գրական արևելահայերենում ու արևմտահայերենում («ծիսական կարմիր-կանաչ ժապավեն՝ կոզբանդ» (ԱԱՆԲ)):

Բարբառներում այն ունի նաև 3-րդ իմաստ՝ «Ար. Թբ. ՆՆ Խրբ. (ԲԼ.) Մշ. (Բղշ.) Սս. Վն. 1. կանաչ ու կարմիր մետաքսե թելերից ոլորած քուղ, որը մկրտության ժամանակ կապում են մկրտվող երեխայի վզին, իսկ պսակի ժամանակ՝ հարսի ու փեսայի պարանոցին, որ, հարսանիքից հետո առաձին ծեսով ետ են անում (կապից արձակում են, թույլ տալով նորապսակների համատեղ ապրելը), 2. Մշ. (Բղշ.) յոթ գունավոր թելերից ոլորած թել, 3. Մշ. (Բղշ.) լարանի գլխի բարակ թելը» (ՀԼԲԲ):

Ստ. Մալխասյանցը նշում է նաև արդեն անգործածական «գոյնզգոյն թելերից հիսված կտոր» և «ներկ» իմաստները:

Կապերտ (բրբ. կարպետ) «շորի կտոր, լաթ, ցնցոտի, քուրձ, կապերտ», որից՝ *կապերտոց, կապերտավրան, նոր՝ կապերտակ կամ կապերտիկ* «շորի կտոր», *կապերտագործ, կապերտագործություն, կապերտաթել* և այլն:

Քող «ծածկույթ, քող», որից ունենք հետևյալ բաղադրությունները՝ *քողարկել, քողաձիգ, սքողել, սքողարկել, թևասքողել* և այլն:

Բացի արևմտահայերենից մնացած բոլոր տարբերակներում հանդիպում ենք՝ **սեկ** «մշակված կաշի», որից՝ *սեկափերթ, ծոպ* «զգեստի ծայր, փունջ», որից՝ *ծոպածեկ, ծոպաւոր, ծպել* «ժապաւել (ժապաւէնով կամ ծոպերով զարդարել)»: Միջին հայերենում *ծոպ* բառից ունենք՝ *ծոպածն*, բարբառներում՝ *ծոպ-պոպ* կազմությունները:

Հաջաղ՝ «լաչակ» իմաստով, անստույգ արմատը չենք գտել միայն բարբառներում:

Եզրակացություն

Այսպիսով՝ «հագուստ» իմաստային դաշտում կան բազմաթիվ անհայտ ծագման բառեր, որոնց ծագման վերաբերյալ կա՛մ ընդհանրապես ոչ մի տեղեկություն չունենք, կա՛մ միայն գիտենք, որ փոխառություն են, բայց բուն աղբյուրները հավաստված չեն: Քննությամբ պարզվում է (ըստ բացատրական բառարանային տվյալների), որ ստուգաբանական բառարաններում արձանագրված շուրջ 60 անհայտ ծագման բառերից մոտավոր հաշվարկներով գրաբարի բառարանում առկա են 2 տասնյակից ավելին, միջին հայերենի բառարանում արձանագրված է շուրջ 10 բառ, արդի արևելահայերենի բառարաններում՝ շուրջ 25, արևմտահայերենում՝ շուրջ 17, բարբառներում՝ շուրջ 12, իսկ մոտ 17 բառ ոչ մի բառարանում արձանագրված չէ (բացառությամբ մի քանիսի առկայությունը Ստ. Մալխասյանցի բառարանում):

Հաշվի առնելով որ լեզվի զարգացման ընթացքում տեղի են ունենում և՛ բառակազմի, և՛ բառիմաստի տեղաշարժեր, հետևաբար այս խմբում ևս բառային փոփոխություններ են լինում բաղադրիչների սերտաճման, իմաստի մթագնման կամ վերաիմաստավորման ճանապարհով: Եվ հետո, ինչպես նշում է Գ. Զահուկյանը, «հայերենի անհայտ ծագման բառերը չի կարելի գնահատել որպես ծագումնաբա-

նորեն և պատմականորեն միասնական արժեք ունեցող ամբողջություն»¹, քանի որ դրանք կայուն թիվ չեն կազմում, և դրանց քանակը կարող է փոփոխվել կատարվող նոր ստուգաբանությունների հետևանքով:

Համառոտագրություններ

ԱԱՆԲ- Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան
անգլ.-անգլերեն
Ար. -Արարատյան
Բլ.-Բալու
ԲՀ-Բառգիրք հայոց
Բղշ.-Բաղշ
բրբ.-բարբառային
ԳԲ- Գրաբարի բառարան
Գնձ.-Գանձակ
Երզն. մտթ.-Մեկնութիւն Ս. Աւետարանին, որ ըստ Մատթէոսի (շարայարութիւն
Ն. Շնորհալոյ)
Թբ.-Թբիլիսի
ԺՀԼԲԲ-Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան
լատվ.-լատվերեն (լատիշերեն)
լիտվ.-լիտվերեն
Խրբ.-Խարբերդ
Կղնկտ.-Կաղանկատվեցի
հայ.-հայերեն
ՀԲԲ - Հայերէն բացատրական բառարան,
ՀԼԲԲ- Հայոց լեզվի բարբառային բառարան
հմմտ.-համեմատել
հնգ.-հնացած
մ. լատ.- միջին լատիներեն
ՄՀԲ- Միջին հայերենի բառարան
Մշ.-Մուշ
ՆՆ-Նոր Նախիջևան
նշ. -նշանակությամբ
Ոսկ. պօղ.-Յովհաննու Ոսկերեանի Մեկնութիւն թղթոցն Պօղոսի
ռուս.-ռուսերեն

¹ Գ. Զահուկյան, Հայերենի անհայտ ծագման բառարմատները, Պատմա-բանասիրական հանդես, 2 (129), Ե., 1990, էջ 64:

Սս.-Սասուն
Վն.-Վան
տաճկ.-տաճկերեն

Օգտագործված գրականության ցանկ

1. **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:
2. **Աճառեան Հր.**, Հայերէն գաւառական բառարան («Էմինյան ազգագրական ժողովածու»), հ. Թ, Թիֆլիս, 1913:
3. **Աճառյան Հր.**, Հայոց լեզվի պատմություն, հհ. 1-2, Երևան, 1940-1951:
4. **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հհ. Ա-Դ, Երևան, 1971-1979:
5. **Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Աւգերեան Մ.**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1979:
6. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Երևան, 1969-1980:
7. **Ղազարեան Ռ.**, Գրաբարի բառարան, հհ. 1-2, Երեւան, 2000:
8. **Ղամոյան Լ.**, Բնիկ հայերեն բառեր «հագուստ» իմաստային դաշտում, Պատմաբանասիրական հանդես, հ. 2, Երևան, 2022:
9. **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, Երևան, 1944-1945:
10. **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Երևան, 1987:
11. **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010:
12. **Ջահուկյան Գ.**, Հայերենի անհայտ ծագման բառարմատները, Պատմաբանասիրական հանդես, 2 (129), Ե., 1990, էջ 62-77:
13. **Սաքապետոյեան Ռ.**, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երեւան, 2011:

STUDYING WORDS OF UNKNOWN ORIGIN IN THE SEMANTIC FIELD “CLOTHING” PRESENTED IN ARMENIAN REFERENCE DICTIONARIES

GHAMOYAN LUSINE

PhD in Philology,

Senior Researcher at the Institute of Language after H. Acharyan, NASRA.

e-mail: lgamoyan@mail.ru

In the semantic field "Clothing" there are many words of unknown origin, which we first tried to divide into two groups: a) words about the origin of which we have no

information at all and b) so-called borrowings, the original sources of which are not confirmed. Then we classified them according to their prevalence and frequency of use.

There are imprecise words about the origin of which linguists try to make some assumptions.

Based on the data of explanatory dictionaries, there are more than 2 dozen words of uncertain origin in the Grabar dictionary, about 10 words are recorded in the Middle Armenian dictionary, about 25 words - in the modern Eastern Armenian dictionary, about 17 words - in the Western Armenian dictionary, about 12 words in dialects, and about 17 words are not recorded in any dictionaries (except for the presence of some words in the dictionary of S. Malkhasyants).

Words of unknown origin do not constitute a stable number: it may change as new etymologies emerge.

Keywords: *clothes, semantic field, imprecise words, Eastern Armenian, Western Armenian, dialect, Middle Armenian, Grabar, borrowing, etymology.*

ИЗУЧЕНИЕ СЛОВ НЕИЗВЕСТНОГО ПРОИСХОЖДЕНИЯ В СЕМАНТИЧЕСКОМ ПОЛЕ "ОДЕЖДА", ПРЕДСТАВЛЕННЫХ В АРМЯНСКИХ СПРАВОЧНЫХ СЛОВАРЯХ

ГАМОЯН ЛУСИНЕ

Кандидат филологических наук

Старший научный сотрудник Института языка им. Г. Ачаряна НАН РА

электронная почта: lgamoyan@mail.ru

В семантическом поле «Одежда» есть множество слов неизвестного происхождения, которые мы сначала попытались разделить на две группы: а) слова, о происхождении которых мы вообще не имеем никакой информации и б) так называемые заимствования, первоисточники которых не подтверждены. Затем мы классифицировали их по распространенности и частоте употребления.

Есть неточные слова, о происхождении которых лингвисты пытаются сделать некоторые предположения.

Исходя из данных толковых словарей, более 2 десятков слов неопределенного происхождения есть в словаре грабара, около 10 слов зафиксировано в среднеармянском словаре, около 25 – в современном восточноармянском словаре, около 17 слов – в западноармянском, около 12 - в диалектах, и приблизительно 17 слов не зафиксированы ни в каких словарях (за исключением наличия некоторых слов в словаре С. Малхасянца).

Слова неизвестного происхождения не составляют стабильного числа: оно может меняться по мере появления новых этимологий.

Ключевые слова: *одежда семантическое поле, неточные слова, восточноармянский, западноармянский, диалект, среднеармянский, грабар, заимствование, этимология.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 25.09.2024թ.:

Հոդվածը գրախոսվել է 05.10.2024թ.:

Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: